Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26.282

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉ.
ՄՈՍԿՎԱ 1931

2 2 MAY 2013

26.282

Թարգմ. Հ. Կ.

Главлит № А—89163. Заказ № 463. Тираж 4.000
Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва, Шлюзовая набережная, 10.

334.
Կ-64
Ար

15 JAN 2010

1601

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Առաջին բոլշևիկական գարնան պրակտիկան մեծ նվաճումների հետ միաժամանակ հայտնաբերեց և պակասություններ առանձին կոլխոզների աշխատանքներում — գարնանացանի համար բավականաչափ պատրաստված չլինելը, ցանելու և բերքը հավաքելու առաջուց կազմված բանվորական պլանի բացակայությունը, կոլխոզնիկների, քարշի և ինվենտարի անշնորք դասավորությունը աշխատանքների ժամանակ, լծկան անասունների թույլ ոգտագործությունը, աշխատանքի վատ կարգապահությունը և աշխատանքների վատ վորակը։

Անցյալ գարնան ամենագլխավոր պակասությունը, վորը պիտի վերացված լինի ամեն կերպ, դա մի շարք ռայոնների կոլխոզներում բերքի ըստ ուտողների բաշխելու սկզբունքի լայն կի-

ՀՍՍՀ — ՍՍՌՄ
Հայ. ՍՍՌ Գիտ. Գրադարան
Հայ. ԳԱ Գրադարան
Հայ. Գ. Մասիսյանի անվան
15562-52

բարկությունն է, վորի շնորհիվ այն մարդիկ, վորոնք չեն ուզում աշխատել և վորոնք կոլխոզ են մտել հասարակ աշխատանքի արդյունքներից շահվելու նպատակով, այնպիսի յեկամուտ եյին ստանում, ինչպես և այն կոլխոզնիկները, վորոնք աշխատում եյին անդուլ անդադար, և այդպիսով խանգարում եյին աշխատանքի կանոնավոր կազմակերպությանը։ Բերքի ըստ ուտողների բաշխելու սկզբունքը Կոլխոզցենտրը գնահատում է՝ վորպես կուլակների և յենթակուլակայինների ազդեցության արտահայտություն, վորոնք աշխատում են կոլխոզներում այնպիսի կարգ սահմանել, վորի շնորհիվ խանգարվեր աշխատանքի կանոնավոր կազմակերպությունը և աշխատանքի արտադրողականության իսկական բարձրացումը կոլխոզներում։

Յերկրորդ բոլշևիկական կոլխոզային գարնանը այդ պակասները վերացնելու նպատակով Կոլխոզցենտրը վորոշում է.

1. Կոլխոզներին պարտադրել տարեկան արտադրական պլանի՝ հիման վրա գործնական պլան մշակել գարնանային գյուղատնտեսական աշխատանքների ժամանակաշրջանի համար։ Պլանի մեջ պիտի նախատեսել ցանքի որացույցային

ժամկետները, ժշակությունների դասավորության տեղը, կոլխոզնիկների, ինվենտարի, քարշի հարկավոր քանակության ամենորյա նարյադը և նրանց բաշխումը ըստ բրիգադների, աշխատանքների ժամանակ ունենալիք կարիքը ֆուրաժի սերմացուի, մրիկը վոչնչացնելու նյութերենի, աբրայի և այլն նկատմամբ։

2. Աշխատանքի պլանը մշակվում է վարչության կողմից։ Վոչ ուշ՝ քան դաշտ դուրս գալուց յերկու շաբաթ առաջ, վերջացնել պլանի քննությունը բրիգադների արտադրական խորհրդակցություններում և կոլխոզնիկների ընդհանուր ժողովում։

Գործնական պլանները կոլխոզների կողմից քննվելու և ընդունվելու ժամանակ պիտի քննել կոլխոզնիկների մեջ աշխատանքը կանոնավոր բաշխելու, բրիգադիրներ ջոկելու, բրիգադները համալրելու և նրանց պլանային խնդիրները վորոշելու կարգը։ Աշխատանքի կանոնավոր բաշխման, ավելորդ շփոթի վերացման, առանձին կոլխոզնիկների անկանոն բեռնման, աշխատանքի կարգապահության համար պայքարելու և մեքենաների կանոնավոր ծանրաբեռնման հարցերը պիտի լինեն բոլոր կոլխոզնիկների ուշադրության կենտրոնում։ Այդ նույն ժողովնե-

բուն և քննվում սոցմրցման և հարվածայնության կիրարկության կարգը թե առանձին կոլխոզնիկների և բրիգադիրների մեջ և թե հարևան կոլխոզների, մեքենա-տրակտորային կայանների և սովխոզների մեջ։

3. Ամեն մի կոլխոզ պարտավոր է՝

ա) մատնանշել հողերը և վորոշել առաջին անգամ մշակվող խամ հողերի, հանգիստ թողած հողերի, արոտատեղիները վարելու, խոտհարքերի չափերը։

բ) սահմանել մշակույթների բաշխումը ըստ ձմեռնամտի և գարնանային հերկման, մշակույթների ցանքսի տեղը և տարածության չափը։ Մշակույթները պիտի ցանել համատարած մասսիվներով, իսկ մի քանի հողամասերում ցանելու դեպքում՝ մշակույթները ցանել խոշոր մասսիվներով։

գ) կոլխոզնիկների հետ միասին ուշադրությամբ քննել տեխնիկական, կերի, սիլոսային և նոր մուծվող մշակույթների տարածությունների չափը և դասավորությունը ըստ դաշտավայրերի, նմանապես և քննել բոլոր տեսակի տեխնիկական մշակույթներին հետևելու և դրանք ժամանակին քաղհանելու կարգը։

Հողեր մատնանշելու գործը հանձնել կոլխոզնիկների տնտեսությունը գիտցող խմբին՝ գյուղատնտեսի մասնակցությամբ։

ՍԵՐՄԱՑՈՒԻ ՄԱՍԻՆ

1. Սահմանել հեկտարի համար պահանջելի սերմացուի սերմանման նորման և վերջնականորեն վորոշել կոլխոզի պահանջը սերմացուի նկատմամբ։

2. Կոլխոզ նոր մտնող տնտեսությունները պարտավոր են կոլխոզ ընդունելու ժամանակ մտցնել սերմացուի պահանջելի քանակություն հանրայնացվող տարածության սերմանման համար՝ հաշվի առնելով ցանքսի ընդարձակման անհրաժեշտությունը։

3. Ցանքսից յերկու շաբաթ առաջ լիովին զտել և տեսակավորել սերմացուն և ստուգել նրա բուսնելու հնարավորությունը։

4. Սերմացուն մրիկից չոր դրությամբ զտել անհապաղ։

5. Սերմացուն նախապատրաստել հեղուկ նյութերի միջոցով զտելու համար, ձեռք բերել զտելու նյութեր հարկավոր քանակությամբ, զտելու հա-

մար տեղ պատրաստել և պատրաստել անհրաժեշտ սարքավորում (պարկեր, տաշտեր, տակառներ և այլն)։

6. Նոր մշակույթների սերմացուն հասցնել և բարելավված տեսակավոր սերմացուի փոխանակությունը կատարել ցանքից յերկու շաբաթ առաջ։ Այդ նույն ժամանակամիջոցում ցանելու համար անհրաժեշտ սերմացուն ուղարկել հեռավոր հողամասերը։ Առաջուց ջանք գործ դնել վոչ կոշտ աբրայի համար, բրեզենտները և պարկերը կարկտնել, և կոլխոզնիկների աբրան հավաքել։

7. Սերմացուի նախապատրաստությունը հանձնել կոլխոզնիկների մի բրիգադի՝ գործի գրավելով գյուղատնտեսին։

ԿԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անհապաղ ստուգել թե վորչափ կերի հատուկ ֆոնդեր են հատկացրած լծկան անասուններին դաշտային աշխատանքների ժամանակաշրջանի համար։

2. Նոր մտնող տնտեսությունները՝ մտնելու ժամանակ մտցնում են կերի անհրաժեշտ քանակություն իրենց կողմից հանրայնացվող անասուններին աշխատանքների ամբողջ ժամանակի ընթացքում պահելու համար։

3. Կերը փոխադրել անասուններին պահելու տեղը ցանքի ժամանակաշրջանում։

4. Կերի հեշտ մարսելիության և ուժեղ ու էկոնոմիկ կերի ամենալավ ոգտագործման համար ֆուրաժը աղալ և կտրատել։

5. Առաջուց վորոշել անասունների նախիրների կանգնելու տեղերը և պատրաստել պահանջելի քանակությամբ տաշտեր և մսուրներ։

6. Հաստատուն կարգ սահմանել անասուններին կերակրելու, կերը և ջուրը դաշտ բերելու համար։ Ֆուրաժը ծախսելու համար պատասխանատու կոլխոզնիկներ ընտրել։ Պարգևատրություն սահմանել կերը տնտեսարար ոգտագործելու համար, կերակրելու ժամանակ՝ կերի կորուստ թույլատրողներին պատժի յենթարկելու միջոցներ մշակել և խստիվ կիրարկել։

ԼԾԿԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Դաշտ դուրս բերելուց յերեք շաբաթ առաջ լծկան անասուններին բաժանել ծանր դաշտային աշխատանքների համար (հերկում, ցանք, դիսկա-

ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱ

վոր գործիքով ցաքանել) և թեթև աշխատանքների համար (տափանում և այլն), միաժամանակ հաշվի առնելով անասունի աշխատանքի բնույթը, ուժը և տաքարյունությունը։

2. Ծանրած մատակներին ոգտագործել թեթև աշխատանքների համար։

3. Կոլխոզը պարտավոր է լծկան անասուններին այնպես պատրաստել, վորպեսզի նրանք որ ու գիշերվա ընթացքում կարողանան աշխատել 12—14 ժամ չհաշվելով ընդհատումները։

4. Դաշտային աշխատանքներից մի ամիս առաջ լծկան անասունները կերակրվում են ավել չափով։

5. Առանձին բրիգադներում նշանակել հատուկ ձիապաններ, նրանց վրա պատասխանատվություն դնելով լծկան անասունների դրության և նրան խնամելու համար։ Սահմանել տուգանքների չափը աշխատանքի ժամանակ լծկան անասունների հետ վատ վարվելու համար։

6. Արգելել ձիյերի ոգտագործումը ինվենտարով հանդերձ, յեթե այդ ոգտագործումը լիովին չի ծանրաբեռնում ձիյերին։

7. Ուղարկել մի վորևե փորձված կոլխոզնիկի, վորպեսզի նա սովորի տեղական անասնաբուժական

կայանում բուժամիջոցներ գործածելու և հիվանդացած ու վնասված անասուններին առաջին ոգնություն հասցնելու ձևերը։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՅԵՎ ԼԾԱՍԱՐՔԻ ՄԱՍԻՆ

1. Ստուգել ինվենտարի նորոգման ընթացքը և նորոգվածի պիտանիությունը աշխատանքի համար։

2. Ամեն մի բրիգադի համար պատրաստել պահեստի խոփեր, արտիքներ, թմբիկներ և լծասարքի պահեստի կոմպլեկտներ։ Բրիգադներին մատակարարել գործիքներ (բանալիներ, մանեկներ, նավթուլ, մուրճեր, մախաթներ և այլն) ինվենտարի և լծասարքի մանր նորոգումների համար տեղում աշխատելու ժամանակ։

3. Նախորոք լծասարքը հարմարեցնել առանձին ձիյերին և յեզներին, համարակալել այդ լծասարքը և հատկացնել յուրաքանչյուր անասունին աշխատանքների ամբողջ ժամանակաշրջանի համար։

4. Ցանքից յերկու շաբաթ առաջ բրիգադների մեջ բաժանել գյուղ.-տնտ. ինվենտարը, փոխադրու-

ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱ

թյան միջոցները և ձիերը՝ աշխատանքները կատարելու ժամկետներին համապատասխան։ Բրիգադի հաժար հնարավորության չափ ընտրել միատեսակ մեքենաներ։

ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՐԻԳԱԴՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վոչ ուշ՝ քան յերկու շաբաթ առաջ դաշտդուրս գալուց՝ կազմակերպվում են բրիգադներ։

2. Կոլխոզնիկների, քարշի և գ.-տ. ինվենտարի քանակությունը յուրաքանչյուր բրիգադում սահմանվում է յելնելով արդյունքի նորմաներից, աշխատանքի ծավալից և նրա կատարման ժամկետներից։ Բրիգադներին հանձնարարվում են ինչպես հատուկ աշխատանքներ (միայն հող վարել, տափանել, ցանել), նույնպես և խառն աշխատանքներ՝ ցանքսի մասսիվների չափերին, կայանից և բնակելի տեղից յեղած տարածության համեմատ։

3. Կոլխոզնիկները ըստ բրիգադների յեն բաժանվում վորակի և աշխատանքին սովոր լինելուն համեմատ, պահպանելով բրիգադներում կոլխոզնիկների մշտական կազմը։

4. Աշխատանքի սկզբից յերկու շաբաթ առաջ բրիգադը ստանում է վորոշ առաջադրություն՝ աշխատանքի տեղի և ժամանակի մատնանշությամբ (նարյադ)։ Բրիգադի ստացած առաջադրությունները քննվում են բրիգադի ընդհանուր ժողովում և սահմանվում է ամեն մի կոլխոզնիկի համար բրիգադում աշխատելու չափը։ Գործնական աշխատանքում բրիգադը ստիպի աշխատի պատվերը դերակատարելու, կիրառելով հանդիպական պլանների, սոցմրցման և հարվածայնության մեթոդները, ստանձնելով հասատաուն աշխատանքային պարտավորություններ։

5. Առանձնապես մշակել բոլոր կոլխոզների ժողովներում և բրիգադներում բերքի բաշխման կանոնները այնպես, վորպեսզի հետագայում բերքը ըստ շնչերի բաժանելու վորևիցե տարբերը վերացված լինեն։ Այս տարվա փորձը ցույց տվեց, վոր նման սպառողական սկզբունքները բերքը բաշխելու վերաբերյալ՝ կոլխոզի աշխատանքի կանոնավոր կազմակերպման գործը քանդում են. աշխատանքի արդյունքները, ըստ աշխատանքի բաշխելու, դեմ են կոլխոզներում կուլակության տարրերը, ծույլերը, հասարակական աշխատանքի արդյունքներից ոգտվել սիրողները, վո-

ՍՅԱՔՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

բոնք այդ աշխատանքին չեն մասնակցում։ Գարնանացանի իսկական հաջողության պայմանն է բոլոր կոլխոզների կողմից բերքը բաշխելու կանոնների իսկական կերպով իրագործելը բացառապես կոլխոզնիկի և նրա ընտանիքի աշխատանքի քանակության և վորակի համեմատ։

6. Բոլոր դաշտային աշխատանքները կատարվում են զդելնի։ Ցանքից մի ամիս առաջ կոլխոզների վարչությունները սահմանում են աշխատանքի ամեն մի միավորի զդելնի գնահատությունը աշխատանքի որերով (վարելու, տափանելու, ցանելու և այլն հեկտար)։ Աշխատանքների գնահատությունները քննվում են արտադրական խորհրդակցություններում և հաստատվում են կոլխոզնիկների ընդհանուր ժողովների կողմից, անպատճառ կախվում են աչքի ընկնող տեղերում և այդ գնահատությունները տրվում են յուրաքանչյուր բրիգադին։ Բրիգադներին տրվող նարյադներում անպատճառ պիտի մատնանշել աշխատանքի գնահատությունը աշխատանքի որերով և կատարված աշխատանքի համար բրիգադը վորքան աշխատանքի որ է ստանալու։ Եթե բրիգադում լինեն զանազան վորակ ունեցող գործավորներ, վորոնք զանազան տեսակի աշխատանք են կատարում, այդ դեպքում սահմանվում է յուրաքանչյուր կոլխոզնիկի կողմից կատարվող աշխատանքի գնահատության չափը աշխատանքի որերով։

7. Բրիգադների աշխատանքը զեկավարելու համար վարչությունը բրիգադիրներ է նշանակում ամենից ակտիվ, փորձված հարվածային-կոլխոզնիկների թվից, վորոնք առաջադեմների թվին են պատկանում աշխատանքի կազմակերպության սոցիալիստական ձևերը կիրառելու նկատմամբ (սոցմրցում, հարվածայնություն), հանդիպական պլանների նախամարտիկներ, վորոնք աշխատանքի վորակի ամենալավ ցուցանիշներն են տվել։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

1. Կոլխոզի վարչությունը վերահսկողություն է սահմանում առանձին բրիգադների կողմից աշխատանքները ժամանակին կատարելու վերաբերմամբ, ստուգում է աշխատանքի վորակը և կազմակերպում է աշխատանքի ընդունելը բրիգադիրներից։

Ա. ՄԱՇՏՈՑԻ ՍՅԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2. Դաշտ դուրս գալուց յերկու շաբաթ առաջ սահմանվում է կատարվող աշխատանքների վորակը, վարելու խորությունը, սերմացուի խորելը, ցանքսի կանոնավորությունը և այլն։

3. Սահմանել նյութական պատասխանատվություն, ներդործելու հասարակական միջոցներ, տուգանությունների չափը՝ վարելու, տափանելու և ցանելու ժամանակ անփույթ վարվելու — հողը կանոնավոր չհերկելու և չտափանելու, հողի մակերևույթի վրա սերմեր չթողնելու համար։

4. Աշնան հերկը տափանել հենց վոր գետինը կհալչի։ Իբրև կանոն՝ տափանել միաժամանակ վարելու հետ։

5. Ցանքսից յերկու շաբաթ առաջ կարգավորել սերմացանիչները համաձայն ցանելու նորմայի և շաբլոնիկներ պատրաստել ցանող ապարատի ընները աշխատանքի ժամանակ շարունակ ստուգելու համար։

6. Սերմացանիչների մեջ սերմացու ածելը կազմակերպել այնպես, վորպեսզի սերմացանիչը ածելու ժամանակ անդործ մնա վոչ ավել քան մեկ-յերկու րոպե։

7. Պատասխանատվություն սահմանել սերմացուն ժամանակին բերելու և սերմացուն սերմացանիչների մեջ ածելը կազմակերպելու համար։

8. Աշխատանքը կատարելուց հետո բրիգադի կոլխոզնիկները կանոնավոր կերպով նարյադը կատարելու և ամեն մի կոլխոզնիկի աշխատածի նկատմամբ յեզրակացություններ են անում, վորպես օրինակ մատնանշելով լավագույն արդյունքների վրա և անխնա մերկացնելով աշխատանքների վորակին վնասողներին։

9. Բրիգադները բաժանել վարչության անդամների մեջ՝ անմիջական ղեկավարության և աշխատանքին հետևելու համար, նույնպես և սիստեմատիկորեն հաշիվներ տալ բրիգադների առաջ կոլխոզի պլանը ընդհանուր առմամբ կատարելու վերաբերյալ։

10. Յուրաքանչյուր կոլխոզում սահմանել մրցանակային ֆոնդ լավագույն գործավորներին և բրիգադներին պարգևատրելու համար, նրանց՝ վորոնք պատվերները գերակատարում են աշխատանքի ամենալավ վորակը պահպանելով։ Կազմակերպել հարվածային-կոլխոզնիկների առաջ քաշելը ղեկավար և ավելի պատասխանատու աշխատանքի համար։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱԽՀ — СССР
ԱԱ. Ա. Մասիսյանի
Ս. ՍՅԱՍԵՎԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1601
15562-52

11. Կոլխոզում սահմանել խստագույն կարգապահություն, աշխատանքի պարզություն և ամեն մեկի պատասխանատվությունը հանձնված աշխատանքի համար, և կոլխոզնիկների կանոնավոր դասավորությունը աշխատանքների ժամանակ։ Լայն կիրառել աշխատանքի կշռադատությունը և քննադատությունը աշխատանքից ազատ ժամանակ։ Պարտավորեցնել բոլոր կոլխոզնիկներին բրիգադներում ճշտիվ կատարել բրիգադիրների բոլոր կարգադրությունները աշխատանքների ժամանակ։

12. Պարտք դնել հանրապետական, յերկրային, մարզային և ռայոնական կոլխոզմիությունների վրա, վորպեսզի նրանք վերահսկողություն և ստուգում կազմակերպեն այն միջոցներն իրոք կենսագործելու վերաբերյալ, վորոնք ամրացնում են աշխատանքային կարգապահությունը, աշխատանքի հատավաբձային (գդելնի) կարգը պատրաստանյութի նորմաների հիման վրա։ Մասսայական պարզաբանություններ անել կոլխոզնիկների մեջ, վոր յեկամուտների բաշխումը կիրագործվի բացառապես համաձայն կատարված աշխատանքի քանակության և վորակի, և այդ աշխատանքի հասանելի աշխատորերի։

13. Ռայկոլխոզմիությունները պարտավոր են կազմակերպել փոխադարձ ոգնություն կոլխոզների մեջ։ Ավելի ապահովված, լավագույն կոլխոզները պիտի վոչ միայն կազմակերպչորեն, այլ և արտադրականորեն (աշխատանքի ժամանակ ազատ ձիեր և ինվենտար դուրս հանելը և ուրիշ կոլխոզներին տրամադրելը և այլն) ոգնություն հասցնեն ավելի թույլ կոլխոզներին, այդ նպատակների համար լայն կերպով կիրառելով հասարակական բուքսիրի և ոգնության այլ ձևեր։

14. Կոլխոզների վարչությունները ամեն հնգոլյակի ընթացքում հայտնում են ռայկոլխոզմիությանը և գյուղխորհրդին կատարված ցանքսերի մասին ըստ մշակույթների։

ԱՐՏԵԼԻ ՍՆՈՒՆԴԸ

1. Դաշտային աշխատանքների ժամանակ կոլխոզնիկների վճռի համաձայն կազմակերպվում է արտելի սնունդը դաշտում, վոր պատրաստվում է կոլխոզնիկների կողմից հանձնված մթերքներից։ Իրար կողքի աշխատող ամեն մի բրիգադի կամ մի քանի բրիգադների համար նշանակվում է կոլխոզնիկ-արտելշչիկ, վորի վրա պարտք է դրվում

բրիգադին պարեն մատակարարել և վորը պատասխանատու յե սնունդի կազմակերպման համար։

2. Բրիգադներին՝ դաշտ դուրս գալուց մի շաբաթ առաջ տրվում են կաթսաներ, դույլեր, գդալներ, թասեր և այլ ամանեղեն։

3. Վոչ ուշ քան աշխատանքների սկզբից յերեք շաբաթ առաջ հարկավոր է սպառողական կոոպերացիայի հետ համաձայնության գալ առաջին հերթի կարևորության իրեր բրիգադներում ծախելը կազմակերպելու մասին (ծխախոտ, լուցկի և այլ ապրանքներ) աշխատանքի ամբողջ ժամանակի ընթացքում։

Կոլխոզցենտրի վարչությունը առաջարկում է բոլոր կոլխոզնիկներին հասարակական վերահսկողության տակ առնել կոլխոզների ղեկավար մարմինները, ստուգելով նրանց աշխատանքը գարնանացանը նախապատրաստելու և կազմակերպելու տեսակետից։ Կոլխոզային լայն մասսաների գրավումը կոլխոզների ղեկավար մարմինների աշխատանքի ստուգմանը, բոլոր կոլխոզնիկների և կոլխոզուհիների՝ կոլխոզները ղեկավարելու գործին իրոք մասնակցելու ապահովությունը կարևորագույն նախադրյալ կլինի գարնանացանի խնդիրները իրագործելու համար։

Աշխատանքի ծրագրի բոլոր ձեռնարկումների պարտադիր իրագործումը, կոլխոզնիկների մոբիլիզացիան պլանային գարնանացանի խնդիրները իրագործելու համար, վճռական պայքարը աջ ոպորտունիզմի և «ձախ» ծռումների արտահայտությունների դեմ կոլխոզային շինարարության պրակտիկայում, պայքարը աշխատանքի շուտափույթ տեմպերի և բարձր վորակի համար կարագացնեն համատարած կոլեկտիվացման ավարտումը և այդ հիման վրա կուլակության վորպես դասակարգի լիկվիդացիան։

Կոլխոզցենտրի վարչությունը վճռական կերպով պահանջում է բոլոր կոլխոզներից և կոլխոզմիություններից, վորպեսզի ամեն մի կոլխոզնիկ իմանա, վոր միայն այն կոլխոզնիկը, վորը կաշխատի, — մասնակից կլինի բերքի բաշխման՝ իր կողմից ճիշտ համապատասխան կատարված աշխատանքի քանակությանը և վորակին։ Կոլխոզցենտրի՝ բերքի բաշխման և աշխատանքի կազմակերպման կանոնների մասին հրատարակված վորոշման համապատասխան — ամեն մի կոլխոզնիկի աշխատանքը պիտի գնահատվի բացառապես աշխատորերով։

Կոլխոզցենտրը առաջարկում է բոլոր կոլխոզ-

նիկներին առանձին ուշադրությամբ հետևել այդ կանոնի կատարմանը և ամեն դեպքերում, յերբ վորևե մեկը փորձ կանի խախտելու այդ կանոնները, անհապաղ հայտնել այդ մասին հողային և կոլխոզային բարձրագույն մարմիններին և մամուլին։

ԽՍՀՄ յեվ ՌՍՖԽՀ Կոլխոզցենտրի
վարչության նախագահ՝
ՑՈՒՐԿԻՆ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ – СССР
им. А. Масникяна
Գ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԱՀԱՆՋԵՑԵՔ
ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ԶՐԻ.
ԴԻՄԵԼ՝ Москва, Никольская, 10.
ЦЕНТРИЗДАТ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0193351

10939

2 ԿՈՊ.

Цена 2 коп.
С. Х. 2.

Рабочая программа весенних работ в колхозах.

На армянском языке.

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.